

**Ես խոնարհում եմ
գլուխս...,
Ո՛վ վարդեններ, որ
սվիխ - ձեռ, կերդարանք
մեք հողին:**

ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑ

Սյունյաց Երկիր

www.syuniacyerkir.am

ԵՐԵՎԱՆԻ 16 ՀՈՒՆԻՍԻ 2015Թ. № 17 (360)

Սյունիքի պատմության նորագույն շրջանի կարևոր իրադարձություններին ու երևելի գործիչների կյանքին ու գործունեությանն անդրադառնալը շարունակում է մնալ «Սյունյաց երկիր» գործունեության առաջնահերթ ուղղություններից մեկը: Նպատակը, ինչպես ասվել է քանիցս, այդ ժամանակաշրջանի պատմությանը եւ գործող անձանց նորովի ու սթափ գնահատական տալն է, ժամանակների եւ սերունդների միջեւ հաջորդականության ապահովումը:

Կապանի տարածաշրջանի վերջին տասնամյակների երախտավորներից է Վոլոդյա Աբրահամյանը, ում էլ նվիրվում է թերթի սույն համարը՝ ծննդյան 80-ամյակի կապակցությամբ:

Վոլոդյա Աբրահամյան ծանաչված շինարարի ներդրումը նկատելի է Քաջարանում՝ 1968թ. երկրաշարժի հետևանքների վերացման, ինչպես եւ Կապանի ու տարածաշրջանի մյուս բնակավայրերի կառուցապատման գործում:

Հարգանքի արժանի է Վոլոդյա Աբրահամյանի ակտիվ մասնակցությունն Արցախյան ազատամարտին եւ հայոց բանակաշինությանը:

Անցնելով երկար ծանապարհ, նվիրվելով խորհրդային, այնուհետեւ նորանկախ հայոց պետության շենացման գործին՝ նա չի մոռացել հայկական ավանդական ընտանիքի մասին, որ օրինակ կարող է ծառայել շատերի համար: Իր սկզբունքներով, աշխարհընկալմամբ, հայրենամովեր գործունեությամբ Վոլոդյա Աբրահամյանը շատ-շատերի համար կարող է ուղենիշ լինել:

Հորելյանի առթիվ ստացված բազմաթիվ շնորհավորանքներից ու գնահատության խոսքերից մի քանիսը, ինչպես եւ նրա անցած ծանապարհի մի քանի դրվագ (նաեւ լուսանկարային), բնականաբար, ներկայացվում է ընթերցողին:

Կարևորեցինք նաեւ Վոլոդյա Աբրահամյանի հետ զրույցը, որը ներկայացնում ենք 4, 5-րդ էջերում:



Կառուցելը նրա կյանքի իմաստն էր

ԱՅՏԵՍԱՐՏ

Վոլոդյա Աբրահամյան. Ծնվել է 1935թ. Քաջարան գյուղում: Հայրը 1941թ. կամավոր մեկնել է ռազմի դաշտ ու զոհվել Ստալինգրադի համար մղված մարտերի ժամանակ՝ չորս անջափահաս երեխայի հոգը թողնելով կնոջ՝ Վարսենիկի ուսերին: Զնայած դժվարին մանկությանը՝ ստացել է միջնակարգ կրթություն: 1954թ. ընդունվել է Երևանի շինարարական տեխնիկում: 1955-57թ. ծառայել է խորհրդային բանակում, իսկ զորացրվելուց հետո՝ շարունակել ուսումը: 1961-ին ավարտել է տեխնիկումը եւ աշխատանքի անցել Քաջարանի շինարարական իրերի կոմբինատում՝ աշխղեկ: Հաշվի առնելով նրա կազմակերպչական ունակությունները՝ ընտրել են «Քաջարան-շին» տրեստի կոմերիտական կազմակերպության ազատված քարտուղար: Աշխատանքին զուգահեռ ընդունվել է Կույբիչեւի Ա.Միկոյանի անվան ինժեներաշինարարական ինստիտուտը եւ 1967-ին ավարտելով՝ ստացել շինարար-ինժեների որակավորում: Նրան վստահել են շինիրերի կոմբինատի տեղամասի պետի, այնուհետեւ՝ այդ կոմբինատի գլխավոր ինժեների պաշտոնները: 1968թ. Քաջարանի աղետալի երկրաշարժի հետևանքները վերացնելու նպատակով ԽՍՀՄ կառավարությունը ստեղծեց «Երկրաշարժի հետևանքները վերացնող» հատուկ վարչություն, որի կազմում Քաջարանում ձեւավորվեց գրասենյակ: Պետ նշանակեցին իր եռամսհով եւ կազմակերպչական ունակություններով աչքի ընկնող երիտասարդ Վոլոդյա Աբրահամյանին: Նրա ղեկավարությամբ արագ վերականգնվեցին ավերված քաղաքի արդյունաբերական եւ քաղաքացիական շինությունները: Հետագայում նշանակվեց նորաստեղծ 5-րդ շինմոնոստալային վարչության պետ եւ աշխատեց մինչեւ 1977թ.: Նրա ղեկավարությամբ են կառուցվել Քաջարանի, Մեղրու, Ագարակի հեռուստաաշտարակները, անց են կացվել տասնյակ կիլոմետրերով մալուխներ: Հեղինակ եւ համահեղինակ է բազմաթիվ ռացիոնալիզատորական առաջարկների, այդ թվում՝ Քաջարանի պլանմոնիթեմային կոմբինատի պոչաբարներում կուտակված թափոնները որպես շինարարական ավազ օգտագործելու արտոնագրված գյուտի՝ «Քաջարանշին» տրեստի նախկին գլխավոր ինժեներ Աղասի Ղազարյանի համահեղինակությամբ: 1977-93թթ. աշխատել է 11-րդ երկաթբետոնե կառուցվածքների գործարանի տնօրեն: Այս կառույցը կոչված էր նպաստելու Ձանգեզուրի տարածաշրջանում կատարվող շինարարական աշխատանքներին: Գործարանի արտադրանքով շուրջ 20 տարի կառուցեցին բազմաթիվ բազմահարկ շենքեր: Բազմիցս ընտրվել է Քաջարան եւ Կապան քաղաքների քաղխորհուրդների դեպուտատ, ինչպես նաեւ ՀամԼԿԵՄ 21-րդ համագումարի եւ Հայաստանի կոմկուսի վերջին՝ 29-րդ համագումարի պատգամավոր: 1993-99թթ. «Քաջարանշին» տրեստի կառավարիչն էր, որը, բացի քաղաքացիական շինարարությունից, զբաղված էր նաեւ ռազմական շինարարությամբ Արցախում ու ազատագրված տարածքներում: Այդ օրհասական ժամանակաշրջանում իրեն դրսեւորեց փայլուն կերպով՝ մասնակցություն ունենալով հայոց բանակաշինությանը: 1999 թվականից առ այսօր «Քաջարանի կոնստրուկշին» ԲԲԸ տնօրենն է, միեւնույն ժամանակ «Վերին ձոր, Քաջարան» հայրենակցական հասարակական կազմակերպության խորհրդի նախագահը: Աշխատանքային բազմաբնույթ գործունեության համար արժանացել է պատվոգրերի, շնորհակալագրերի ու «Աշխատանքային արիության համար», «Վազգեն Սարգսյան», Հայոց բանակի 20-ամյակին նվիրված մեդալների: Կինը՝ Լաուրա Գասպարյանը, բժշկուհի է, ունեն երկու որդի եւ մեկ դուստր, ովքեր ստացել են բարձրագույն կրթություն:

ՖՈՏՈՂՈՒՐ

Նայրենի եզերք



ՖՈՏՈՒՄ

Կապան

Շնորհավորանք եւ գնահատանք



ՍՈՒՐԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Սյունիքի մարզպետ

Ի սրտե շնորհավորում եմ Վոլոդյա Աբրահամյանին՝ ծննդյան 80-ամյակի առթիվ: Բացի նրանից, որ խորհրդային տարիներին լուրջ, ճանաչված շինարար էր, Ղափանի երկաթբետոնյա կառուցվածքների գործարանի տնօրեն, Արցախյան պատերազմի դժվարին օրերին եւ անկախության տարիներին լուրջ դերակատարություն ունեցավ բանակային շինարարության ոլորտում: Հիշում եմ՝ իր միջոցների հաշվին, երբ բանակը նոր էր ձեւավորվում եւ տարբեր տարածաշրջաններում բանակային ստորաբաժանումներ պիտի տեղակայվեին, բավականին շինարարություն կատարեց: Եվ ընդհանրապես

բանակի համար ոչինչ չի խնայել, կարողացել է միջոցներ հայթայթել, ստեղծել, որոնք ներդրել է սահմանների պաշտպանության կազմակերպման գործում: Մի խոսքով՝ մեր երկրի համար վճռական այդ ժամանակահատվածում Վոլոդյա Աբրահամյանն իրեն դրսեւորեց որպես շինարարական գործի հմուտ կազմակերպիչ՝ իր համեստ մասնակցությունն ունենալով մեր բանակի հաջողություններում:

Այն ճշմարիտ գիտակցումն ուներ, որ առանց զինվորի սոցիալ-կենցաղային հարցերը լուծելու, առանց պաշտպանական կառույցներ ստեղծելու դժվար կլինեի պահպանել մեր սահմանները:

Որպես կապանցի, որպես սյունեցի հարգված անձնավորություն է, հայրենի եզերքի հոգսերով ապրող մարդ: Եվ այսօր էլ նույն՝ աշխատունակ անձնավորությունն է, եւ եթե Նյութապես ու ֆիզիկապես չի կարողանում օգնել մարդկանց, ապա փորձում է իր խորհուրդներով օգտակար լինել, բարոյապես նեցուկ լինել:

Չնայած այն բանին, որ արդեն 80 տարեկան է, բայց նրա եռանդը բնավ չի մարել: Այս առումով երջանիկ մարդկանցից մեկն է Վոլոդյա Աբրահամյանը: Քանզի իմաստալից կյանք է ունեցել ու տասնյակ տարիներով չափվող ճանապարհին: Վստահ եմ, որ ութսունամյա բարձունքից մի հետադարձ հայացք է ձգելու իր անցած ուղուն՝ տարիներով կուտակած փորձն ու հմտությունը երիտասարդ սերնդին հաղորդելու պատրաստակամությամբ:

Գնահատելի է «Սյունյաց երկրի» հետեւողական պահվածքը՝ ժամանակ առ ժամանակ ներկայացնելու մեր ավագ եւ վաստակաշատ ընկերներին, ովքեր ներդրում ունեն մարզի սոցիալ-տնտեսական եւ հոգեւոր-մշակութային զարգացման գործում: Նրանց կյանքը, հիրավի, հայրենի եզերքին նվիրվելու ուսանելի օրինակ է աճող սերնդի համար: Այդ մարդկանցից մեկն էլ մեր հորեյարն է՝ Վոլոդյա Աբրահամյանը, ում կրկին իմ անկեղծ շնորհավորանքն ու բարի մաղթանքն են հղում: ■



ՄԱՆՎԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Գեներալ-լեյտենանտ, ԱԺ պատգամավոր, Երկրապահ կամավորական միության վարչության նախագահ

Սախ ուզում եմ շնորհավորել Վոլոդյա Աբրահամյանին՝ հորեյարնի առթիվ: Նման մարդիկ հազվադեպ են հանդիպում ու քիչ են: Մասնավորապես խորհրդային Միության օրոք կայացել էին, իսկ անցումային շրջանում առանց որեւէ տատանման, առանց երկմտանքի նվիրվեցին մեր նորանկախ պետության կայացմանը: Նա այս երկրի կամավորականներից մեկն է, հայ պետականության ստեղծման կամավորականներից: Կամավորական ասելով նկատի չունեն միայն զենքն ու-

սին զինվորը, կամավորականը նա է, ով իր մասնագիտական որակներով, նվիրվածությամբ կանգնեց մեր պետության կողքին:

Վոլոդյա Աբրահամյանը մասնագիտությամբ շինարար էր, արտադրության կազմակերպիչ, հզոր գործարան ու շինարարական տրեստ է ղեկավարել, բանակաշինության գործում այդ մասնագիտությունը շատ պահանջված էր՝ ինժեներական կառուցվածքների ստեղծման, առաջին գծի բլինդաժներից ու խրամատներից սկսած մինչեւ զինվորների ու սպաների սոցիալ-կենցաղային պայմանների բարելավումը: Կանոնավոր բանակ ստեղծելու համար կանոնավոր գործաստեր էին անհրաժեշտ: Նա բանակ ստեղծելու գործում մեզանից մեկն էր, իր շինարարական կազմակերպության տեխնիկայով, մարդկային հնարավորություններով նեցուկ էր լինում բանակաշինությանը: Ջինվորական կացարան էր կառուցում, ճանապարհներ անցկացնում, մասնավորապես այդ ժամանակ շինանյութը չէր բավականացնում, իր տեխնիկայով շինաքար էր հայթայթում, այլ նյութեր՝ իր հնարավորություններն օգտագործելով:

Այս առումով համարում եմ, որ նա հայ կամավորականներից մեկն է եղել, հայոց ազգային բանակի ստեղծմանն էապես նպաստած անձնավորություն: Նրա հետ պատերազմի օրերին շատ առիթ է եղել շփվելու, եւ շատ ուրախ եմ, որ այսպես առողջ, առույգ եւ տեսնում: Ուրախ եմ, որ շարքում է, դեռ ծառայում է մեր պետությանը, մեր անկախության ամրապնդմանը: Ես նման մարդկանցով հպարտանում եմ եւ ցանկանում եմ միշտ այդպես առողջ ու առույգ տեսնել:

Նրա ընտանիքին ու զերդաստանին մաղթում եմ հաջողություններ, մեր ժողովրդին ու մեզ՝ խաղաղություն: Այդ խաղաղությունը մենք ենք մեր ձեռքերով ստեղծել, մեր ձեռքերով էլ պիտի պահպանենք, որ մեր երեխաները, մեր թոռները, գալիք սերունդները կարողանան վայելել այն: ■

ՎՈՒՈՂՅԱ ԱՐԲԱՅԱՄՅԱՆ. «Սպարապետ Վազգեն Սարգսյանի հետ համագործակցությունը, հայոց բանակաշինությանը մասնակցելը կյանքիս՝ հպարտությամբ լցված օրերն են»:



Պատանու էն լուսանկարները



ՌՈՒՆԵՂ ՂՈՆՅԱՆ

ՀՀԿ Ղափանի շրջկոմի նախկին 1-ին քարտուղար, 1980-88թթ.

Երիտասարդ տարիքից Վոլոդյա Աբրահամյանն առօրյա կյանքում եւ աշխատանքում ակտիվ դիրքորոշում ուներ եւ մեր քաղաքի տարեգրության մեջ վաստակ ունեցող անձնավորություն է: Նրա գործունեությանը տեղեկացված են անցյալ դարի 70-ական թվականներից, երբ Ղափանի կուսընկերություն էի աշխատում: Առավել մեջ տպավորվել է այն, որ բավականին երիտասարդ տարիքում նրան վստահել էին «Քաջարանշին» տրեստի շինվարչություններից մեկի ղեկավարումը: Իսկ դա այն տարիներին էր, երբ ընդլայնվում էին Ջանգեզուրի պղնձամուլիբդենային կոմբինատի արտադրական հզորությունները, մեկը մյուսից հետո շարք էին մտնում սոցիալ-մշակութային օբյեկտներ, կառուցվում բնակելի զանգվածներ:

Երբ երկաթբետոնյա կառուցվածքների գործարանի ղեկավարումը վստահվեց Աբրահամյանին, շինարարական գործունեության ավելի լայն ասպարեզ բացվեց: Քանզի այդ ձեռնարկությունը զբաղվում էր ոչ միայն երկաթբետոնյա կոնստրուկցիաների, այլև շինարարական նյութերի արտադրությամբ (խիճ, ավազ, ասֆալտ, ատաղձագործական նյութեր եւ այլն): Եվ չեն կարծում, որ մեր շրջանի ու քաղաքի շինարարական ոլորտը երբեք ընդհատվել է: Անկախության տարիներին հետագա գործունեության մեջ որոշ քաղաքական ակտիվություն է ունեցել: Իմիջիայլոց ասած, երիտասարդ տարիքում կոմերիտ-միությունում է աշխատել, հրապարակային խոսք ասելու, ելույթ ունենալու ծիր է ունեցել: Բայց նրա գործունեության մտարը թեքվել է դեպի քաղաքաշինությունը, մեր քաղաքի եւ շրջանի արտադրական օբյեկտների կառուցումը: Հետագայում ավելի գործուն մասնակցություն է ունեցել Կապան քաղաքի եւ շրջակա գյուղերի հրետակոծության հետեւանքների վերացման աշխատանքներին: Անկեղծ ասած՝ նաեւ երախտագիտության զգացումով եմ լցված նրա ու բժշկուհի տիկնոջ՝ Լաուրայի հանդեպ: Նրանք իմ ծնողների անմիջական հարեւանն էին, հիշում եմ՝ թե որքան են օգնության ձեռք մեկնել տարիքն առած հորս, երբ նա արյան ճնշման հետ կապված խնդիրներ էր ունենում: Միշտ ցանկացել եմ նրանց շնորհակալություն հայտնել եւ ուրախ եմ, որ առիթը եկել է:

Վոլոդյա Աբրահամյանն օրինակելի ընտանիք ունի, հիմնավոր դաստիարակություն ստացած երեխաներ, որ հասարակության մեջ արժանապատիվ պահվածք ունեն եւ հասել են իրենց նպատակին: Ինձ թվում է՝ երջանիկ մարդ է Վոլոդյա Աբրահամյանը, որ իր զավակներն իրենց կենսագրությունը շարունակում են այնպես, ինչպես ինքը կերպեր:



ԱԼԻԿ ՄԻՐՉԱԲԵԿՅԱՆ

Գեներալ-լեյտենանտ, ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ-նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետ

Վոլոդյա Աբրահամյանի հետ մեր առաջին հանդիպումը եղել է 1992 թվականի աշնանը: Ես այն ժամանակ պաշտպանության նախարարության սպառազինության վարչության շտաբի պետն էի: Խնդիր էր առաջացել զենքի մատակարարման հետ կապված. պիտի զենք հատկացնեինք Կապանի շրջանին: Խնդիր էր ծագել, թե ում պիտի տրամադրենք զենքը: Եթե հիշողությունս չի դավաճանում, հենց այդ ժամանակ էլ առաջին անգամ հանդիպեցի նրան, ավելի ստույգ՝ նրա հետ էր պայմանավորվածությունը, սպառազինության տեղափոխման համար մեքենաները նա էր հատկացրել: Հետո արեւելյան սահմանների պաշտպանական գոտիների կառուցման ժամանակ

մեր հանդիպումներն ավելի հաճախակի դարձան: Ոչ միայն առաջին գծում, այլև տարբեր տեղամասերում ռազմաշինարարական կառուցվածքներ ունենալու հրամայական պահանջ էր ծագել: Այդ ժամանակ արդեն նախարարության սպառազինության վարչության պետն էի եւ հաճախ էի գալիս Կապանի շրջան: Եվ պիտի ասեմ, որ խնդիրներ չէին ծագում, որովհետեւ գործի զլխին կանգնած էր «Քաջարանշին» տրեստի կառավարիչ Վոլոդյա Աբրահամյանը, ով մասնավոր պաշտպանական գոտիների կառուցման գործում մեծ ներդրում ունեցավ: Հիշում եմ՝ դրանց բացման արարողությանը (եթե չեմ սխալում 1997 թվականին էր) մասնակցում էր Սպարապետ Վազգեն Սարգսյանը: Նա փորձեց կատակել՝ Աբրահամյանից հարցնելով, թե կատարված շինաշխատանքների համար ինչքան գումար կպահանջեն, վերջինս էլ, թե՛ մի միլիարդ դրամից ավելի: Սպարապետն էլ ավելացրեց, թե ինքն ընդամենը 70 տոննա դիզելային վառելիք է հատկացրել... Ինչպե՞ս ես կառուցել, Աբրահամյանն էլ, թե՛ «Քաջարանշին» տրեստը մատաղ ենք արել բանակին:

Մեր առաջին ծանոթությունից 20 տարուց ավելի ժամանակ է անցել, այդ ընթացքում տարբեր շփումներ ենք ունեցել, եւ միշտ էլ տպավորություն եմ ունեցել, որ Վոլոդյա Աբրահամյանը կյանքով լեցուն, խոսքը գետնին չզգող, ձեռներեց անձնավորություն է: Բարեբախտություն եմ համարում, որ կյանքում նրա հետ հանդիպել եմ, եւ մինչեւ հիմա մարդկային-ընկերական հարաբերությունները պահպանել ենք, թեպետ տարիքային մեծ տարբերություն կա:

Իմ ավագ ընկերը հատում է 80-ի սահմանագիծը: Նման դեպքում՝ սովորաբար մաղթանքներ են հնչում: Կցանկանայի, որ նա միշտ պահպաներ իր կենսուրախությունը (որ ավանդաբար կա նրա մեջ), թող նախախնամությունը եւս 25-30 տարվա կյանք բաշխի նրան, եւ Աստուծո բացվող ամեն օրը բարի լինի Վոլոդյա Աբրահամյանի եւ նրա ընտանիքի համար:

Շնորհավորանք եւ զնախաբանք

Ճարգագրույց



Քաջարան

Կառուցելը նրա կյանքի իմաստն էր

Պարոն Աբրահամյան, շինարարական ծավալուն աշխատանքներ եք կատարել Կապանի եւ Մեղրու տարածաշրջաններում: Եթե հետադարձ հայացք ձգենք, երբևէ անհիշելի է սկսվում Ձեր շինարարական գործունեությունը:

– 1961թ. Երեւանի շինարարական տեխնիկումն ավարտելուց հետո վերադարձաք Քաջարան եւ աշխատանքի անցաք որպէս Քաջարանի շինարարական իրերի կոմբինատի աշխույժ: Հաջորդ տարիները իմ կազմակերպչական ունակությունները՝ ընտրել են «Քաջարանշին» տրեստի կոմբինատի կազմակերպչական ազատված քարտուղար: Աշխատանքին զուգահեռ սովորել են Ա.Միկոյանի անվան ինժեներաշինարարական ինստիտուտում եւ ստացել շինարար-ինժեների որակավորում, որից հետո ինժե նշանակել են 6-րդ շինվարչության տեղամասի պետ, այնուհետեւ՝ շինիրերի կոմբինատի գլխավոր ինժեներ: Իսկ հետագայում էլ ղեկավարել են 5-րդ շինմոնտաժային վարչությունը, 11-րդ երկաթբետոնե կառուցվածքների գործարանը, «Քաջարանշին» տրեստը:

– Ո՞րն է եղել Ձեր առաջին նշանակալի գործը: Թվարկեք ամենակարեւոր նախաձեռնությունները, որոնք իրականություն դարձան:

– Քաջարանի 1968թ. երկրաշարժի հետեւանքները վերացնող հատուկ վարչության քաջարանյան գրասենյակի պետ նշանակվելուց հետո սկսեցինք վերակառուցել քաղաքը: Արդյունքում իմ ղեկավարությամբ վերակառուցվեց Քաջարան քաղաքը: Հետագայում՝ 5-րդ շինմոնտաժային վարչության պետ աշխատելիս, հսկայածավալ շինմոնտաժային աշխատանքներ կատարեցինք Քաջարանում, Ագարակում, Մեղրիում ու հարակից գյուղերում: Իմ ղեկավարությամբ են կառուցվել Քաջարանի, Մեղրու, Ագարակի հեռուտաաշտարակները, անց կացվել տասնյակ կիլոմետրերով մալուխներ, այն էլ այնպիսի անմատչելի բարձունքների վրա, ինչպիսիք են

Խուստուկի մատույցները, Տաշտունի լեռնանցքը: Կապանում կառուցեցինք Երկաթուղայինների թաղամասի 9 հարկանի, Հալիձոր, Բաղաբերդ, Շինարարների թաղամասերի որոշ շենքեր եւ մի շարք մշակութային, սոցիալ-տնտեսական հիմնարկներ: Մեղրիում կառուցվեցին մեկ 9 հարկանի, մի քանի 5 հարկանի, ինչպէս նաեւ հյուրանոցի շենքերը, Ագարակում՝ կայարանի շենքը եւ այլն:

– Տարիներ շարունակ շինարարական կազմակերպություններ եք ղեկավարել, ո՞րն է այդ ոլորտում այսօրվա մեր ամենամեծ բացթողումը. պահպանվո՞ւմ են սեսյունակայունությունը, աշխատանքի որակը:

– 1968թ. Քաջարանի երկրաշարժից հետո մենք ապացուցեցինք, որ մեր շինարարները շատ որակյալ աշխատանք են կատարում: Երկրաշարժի հետեւանքով գոհեր չեղան, բայց շենքերը ճաքեցին, իսկ Հայաստանը սեսյունի գոտի համարվեց, եւ սկսեցին շենքեր կառուցել 9 բալ ուժգնության երկրաշարժի համար: Այդ տարիներին պետշինն ամեն ամիս գալիս, ստուգում էր շինարարական աշխատանքների որակը եւ խախտումների դեպքում տույժ-տուգանք սահմանում: Բայց այսօր լայնածավալ շինարարական աշխատանքներ չեն իրականացվում, եղածի դեպքում էլ ո՞վ է ստուգողը: Իհարկե, չեն կարող միանշանակ ասել, որ անորակ աշխատանք են կատարում, բայց մի բանում համոզված են. շինանյութի որակին, ինչպէս նախկինում, մեծ ուշադրություն չեն դարձնում:

– Խորհրդային Միության փլուզումից հետո շրջադարձային շատ իրադարձություններ տեղի ունեցան, որոնցից մեկը (եթե ոչ գլխավորը) Արցախյան ազատամարտն էր: Ո՞րն է Ձեր դերակատարությունը Արցախյան գոյամարտի տարիներին:

– Հայաստանի կոմկուսի վերջին՝ 29-րդ համագումարին մասնակցել են եւ իմ ելույթում նշել, որ եթե լավ ժամանակներ լինեին, Երեւի ինժե չընտրեին, ավելի

ճել մեր պետությունը: Արցախյան պատերազմի տարիներին «Քաջարանշին» տրեստի կառավարիչ էի, զբաղվում էի եւ քաղաքացիական, եւ արդեն հրատապ դարձած ռազմական օբյեկտների շինարարությամբ: Այդ տարիներին Կապանի Շինարարների թաղամասում բնակելի շենք կառուցեցինք, բայց ավելի շատ լծվեցի ռազմական օբյեկտների շինարարությանը. մեկ օր անգամ ապաստարան չեմ գնացել: Երբ պատերազմը սկսվեց, դուրս եկա փողոց, հանդիպեցի մի աղջնակի, ով ինժե հարցրեց ապաստարանի տեղը (խմբ.՝ մինչեւ հիմա էլ հուզվում է այդ դեպքը պատմելիս): Եվ այդ պահին որոշեցի մինչեւ վերջ ներդրում ունենալ պատերազմական գործողություններում: Գնում էի մարտի ամենաթեժ կետերը: Կառուցեցինք բլինդաժներ, գաղտնի ճանապարհներ, գրավյալ տարածքներում շենք-շինություններ, մասնավորապէս Ջերբախում՝ գինվորական հոսպիտալ, հացի փուռ, լվացքատուն, ռազմատուներական կենտրոն, կաթսայատուն եւ այլն: Իմ համարձակության եւ նվիրվածության համար վայելել են Սպարապետ Վազգեն Սարգսյանի սերն ու հարգանքը:

Պակաս կարելու չէր նաեւ քիկուքի ուժերի մոբիլիզացումը՝ գինվորներին օգնություն ցուցաբերելու նպատակով: Իմ նախաձեռնությամբ մարդկանց մի մասը ծխախոտ, մյուս մասը սնունդ, հագուստ էր տեղափոխում մարտի դաշտ: Պատահել է նույնիսկ, որ ինժե ասել են՝ ինչո՞ւ ես այդ տարիքում գնում մարտի դաշտ, քո ինչի՞ն է պետք: Բայց այն համոզմանն էի, որ եթե ես չգնայի, դու չգնայիր, բա ո՞վ գնար. հանուն հայրենիքի պիտի ամեն ինչ զոհաբերել: Այսօր հպարտանում եմ այդ տարիներին իմ կատարած աշխատանքով, որի համար արժանանում եմ շատերի հարգանքին: Հիշում եմ՝ սարի բարձունքին մի այնպիսի ամրություն էինք կառուցել, որ մի ամբողջ դիվիզիա կարող էր դիմագրավել: Սպարապետը, երբ տեսավ այդ կառույցը, հարցրեց, թե ինչպէս են կարողացել իր տրամադրած 70 տոննա դիզվառեթիքով կատարել այդ աշխատանքը: Հարցին այսպէս պատասխանեցի. «Սպարապետ,»



Վոլոդյա Աբրահամյանի ընդանիքը



«Քաջարանշին» տրեստը մատաղ են արել հայոց բանակին»: Սպարապետն ասաց. «Քեզ պես մվիրյալներ շատ լինեին մեր երկրում, Հայաստանը կծաղկեր»:

– Ի՞նչ դժվարություններ եղան քաղաքացիական շինարարության անցնելիս:

– Գիտե՞ք ինչ, դժվարին ժամանակների հետ համընկավ ռազմական շինարարության անցնելը: Նախ՝ շինանյութ չկար, հիմնականում օգտագործում էինք գրավյալ տարածքներից բերված շինանյութը: Բացի դրանից՝ նորանկախ պետությունը գումար չուներ ներդրում կատարելու համար: Բայց իմ տրամադրության տակ եղած «Քաջարանշին» տրեստի տեխնիկան, շինանյութն ամբողջովին օգտագործեցի բանակաշինության համար:

– Նշանավոր մարդիկ (պետական ու քաղաքական, հոգեւոր-մշակութային գործիչներ), որոնց հետ շփվել եւ գործ եք ունեցել... Ո՞ւմ եք համարում Ձեր ուսուցիչը կյանքում, շինարարության մեջ, կառավարման ոլորտում, մարդկային հարաբերություններում:

– Ծանր մանկություն եմ ունեցել, հիշում եմ, թե ինչպիսի դժվարությամբ մայրս եւ տատս մեծացրել են ինձ, եղբայրներիս ու քրոջս: Ես իմ առաջ նպատակ էի դրել մեծ մարդ դառնալ: Կյանքիս ողջ ընթացքում պատիվ եմ ունեցել համոզվել շատ նշանավոր մարդկանց հետ: Նրանց հետ առնչվելիս սիրում էի նստել մի անկյունում եւ լսել նրանց զրույցները. չէ՞ որ նրանցից շատ բան ունեի սովորելու: Բայց իմ ուսուցիչը, կյանքիս «ուղեցույցը» եղել են «Քաջարանշին» տրեստի կառավարիչ Սարգիս Վարդանյանի կյանքն ու գործունեությունը: Նա հատուկ կրթություն չէր ստացել, բայց փորձառու եւ հեռատես մարդ էր, բնատուր խելքի տեր, ով բարձր մակարդակով ղեկավարում էր հարյուրավոր ինժեներներին:

Տասն ինը տարեկանս եմ բոլորում, բայց դեռ շարունակում եմ աշխատել:

Իսկ իմ աշխարհայացքի ծեսավորման գործում մեծ էր քեռուս դերակատարությունը, ով չորրորդ դասարանն էր ավարտել, բայց խորա-

գիտակ մարդ էր: Երբ պաշտոն ստացա, գնացի նրան տեսության, եւ ինձ ասաց. «Դու ամենախելացին չես, պարզապես քո բախտն է ժպտացել: Հիշիր, պաշտոնը սեփականություն չէ, հիմնականից տրամադրվիր, որ վաղն այն կարող են քո ձեռքից խլել: Եթե քեզ ինչ-որ հարցով դիմեն, պատկերացրո՛ւ, թե դու ես դիմողը. ուշադիր լսիր եւ հնարավորության սահմաններում օգնիր»:

– Ի՞նչ տեղ է գրավում քաղաքականությունը Ձեր կյանքում:

– Ինքս շինարար եմ եւ այդքան էլ չեմ զբաղվել քաղաքականությամբ, բայց կարող եմ ասել, որ քաղաքականության մեջ հզոր անհատականություններ են պետք: Քաղաքականությունն իմ ոլորտը չէ. այն կեղծիք է, մանեւրներ, խարդավանք, աչքակապություն...

– Երկար տարիներ ղեկավար պաշտոնում աշխատելով՝ ինչպե՞ս եք կարողացել ընտանիքին անհրաժեշտ ժամանակ տրամադրել:

– Ես մանկուց աշխատել եմ, բայց նաեւ սովորել եմ հանգստանալ: Ընտանիքիս հետ տարբեր երկրներ եմ մեկնել հանգստանալու, ճիշտ է, կինս է հիմնականում զբաղվել երեխաներիս դաստիարակությամբ, երբեմն նույնիսկ «մեղադրել» եմ նրան՝ երեխաներին չափից դուրս փափուկ պահելու համար: Ձգտել եմ այնպիսի գործունեություն ծավալել, որի արդյունքում իմ երեխաները կհպարտանային ինձնով:

– 80 տարվա հեռավորությունից նայելով՝ ո՞րն է Ձեր ամենամեծ ձեռքբերումը, հպարտությունը:

– Իմ հպարտությունը երեխաներս են, ովքեր այս կյանքում գտել են իրենց արժանի տեղը, ոչ մի անգամ ինձ չեն անհանգստացրել, միայն ու միայն ուրախացրել են իրենց ձեռքբերումներով: Չնայած Քաջարանում երկրաշարժի հետևանքներն իմ ղեկավարությամբ վերացրել էինք եւ 1975թ. այն խորհրդային Միությունում միակ քաղաքն էր, որտեղ բնակարանի խնդիր չկար, բայց իմ ամենամեծ ձեռքբերումը համարում եմ իմ մասնակցությունը հայոց բանակաշինությանը:

– Եթե կյանքը նորից սկսեիք, ո՞ր

Հայրենական մեծ պարերազմում զոհված քաջարանցիների հիշատակը հավերժացնող հուշարձանի մոտ



Քաջարանի կոմբինատի վարչական շենքը կառուցելիս



սխալը կարբագրեիք, ո՞ր քայլը թույլ չէիք տա, կամ ո՞ր բացթողումը կշտկեիք:

– Կյանքում ճակատագրական սխալներ թույլ չեմ տվել, չեմ արել քայլեր, որոնց համար փոշմանեմ: Եթե հնարավորություն տրվեր նորից ապրել, նույն կերպ կապրեի:

– Մարդկային հարաբերություններում ի՞նչն էր առաջնային Ձեզ համար, ի՞նչ սկզբունքով եք առաջնորդվում կյանքում:

– Մարդու մեջ ամենամեծ արժանիքը համարում եմ ճշտախոսությունը: Հիշում եմ՝ մանուկ հասակում ինչպես է տատս կրակխառնիչով ինձ ծեծել սուտ խոսելու համար եւ խրատել՝ երբեք սուտ չխոսել, քանի որ Աստված ինձ կպատժի: Բայց, ճիշտն ասած, ես աթեիստ էի եւ չէի հավատում դրան: Թեկված այսօր պիտի խոստովանեմ, որ Աստված միշտ ինձ պահապան է եղել. բոլոր բնագավառներում էլ միշտ հաջողություն եմ ունեցել:

Հաջորդ սկզբունքս եղել է դիմացինին հնարավորության սահմաններում օգնելը: Ողջ գործունեության ընթացքում մշտապես աջակցել եմ կարիքավորին, եւ այսօր դրա շնորհիվ է, որ վայելում եմ հայրենակիցներիս մեծ մասի սերն ու հարգանքը:

Ազնվությունը, բարությունն ու հարեմասիրությունն են եղել սկզբունքները, որոնցով առաջնորդվել եմ կյանքիս ընթացքում:

– Ինչպես գիտե՞ք, «Վերին ծոր, Քաջարան» հասարակական կազմակերպության նախագահն եք: Ի՞նչ առաքելությամբ եւ ստեղծվել եք:

– 1999 թվականին ստեղծվել եմ «Վերին ծոր, Քաջարան» հասարակական կազմակերպությունը, որի առաքելությունն է միավորել Քաջարանից դուրս ապրող մեր հայրենակիցներին, նրանց կապը հայրենիքի հետ կայուն պահել, անհրաժեշտության դեպքում նրանց պաշտպանել:

– Ինչպե՞ս ծնվեց «Քաջարան. Վերին ծորի երեւելի մարդիկ» գիրքը գրելու միտքը:

– Ուիմստոն Չերչիլն ասում է. «Նա, ով մոռանում է անցյալը, դատապարտված է այն վերապրելու նորից»:

Հիշում եմ՝ մեր գյուղի տունը գտնվում էր քրաղացի մոտ, եւ գնացող-եկողը մտնում էր մեր տուն: Մեր մեծ վառարանի շուրջը հավաքվում էին մարդիկ եւ զանազան պատմություններ պատմում: Մեծ տատիս եղբայրը՝ աշուղ Արզումա-

նը, որ կույր էր, շատ հեքիաթներ, պատմություններ գիտեր: Հատկապես շատ էին պատմում 1905թ. բախումների ընթացքում մերոնց ցուցաբերած քաջությունների մասին: Այդ բոլոր պատմությունները հիշելով, հետագայում նշանավոր քաջարանցիների կյանքին ծանոթանալով՝ որոշեցի գրել այդ գիրքը՝ այդ անհատներին մոռացությունից փրկելու համար: Հինգ տարի զբաղվել եմ նյութերի, լուսանկարների հավաքմամբ եւ արդյունքում ստեղծել գիրքը, որի մեջ տեղ են գտել բոլոր նշանավոր քաջարանցիները, ովքեր մեր երկրամասի, ինչպես նաեւ երկրի կայացման գործում մեծ ներդրում են ունեցել:

– Ի՞նչ ծրագրեր ունեք:

– Նպատակ ունեմ Կապանում ստեղծել 21-րդ դարի արտադրություն: Մեր տարածաշրջանում քարի մի տեսակ կա, որից կարելի է ստանալ որակյալ ամրաներ. լաբորատոր փորձաքննությունը ցույց է տվել, որ դրանից կարելի է նաեւ որակյալ ներկ ու բամբակաման նյութ ստանալ ավելի էժան տարբերակով: Բիզնես-պլանն արդեն կազմվել է, բայց դեռեւս շատ աշխատանք կա կատարելու: Եթե կարողանամ իմ ծրագիրն իրականություն դարձնել, մոտ 1200 մարդ կապահովվի աշխատանքով: Մինչեւ կյանքիս վերջը պիտի աշխատեմ՝ եւս մեկ մնայուն կառույց իմ ժողովրդի համար թողնելու հստակ նպատակով:

– Ձեր կյանքի ամենաուրախ եւ ամենատխուր օրը:

– Կյանքիս ամենատխուր օրը հորս սեւ թուղթը ստանալու օրն էր, իսկ ամենաերջանիկը՝ առաջնեկիս՝ Վահանի ծննդյան օրը, ինչպես նաեւ Շուշիի ազատագրման ու զինադադարի օրերը:

– Պարո՞ն «Ժողովրդական գեներալ», որպես վերջաբան, ի՞նչ կասեք մարդկանց:

– Մարդիկ կան, ովքեր կյանքից դժգոհում են, բայց ոչ երբեք իրենց սեփական խելքից: Մինչդեռ պիտի նախեսառաջ իրենց խելքից դժգոհեն: Երբ կյանքում ինչ-որ բան չի ստացվում, երբեք ուրիշին չպիտի մեղադրես, միայն ինքդ քեզ: Պիտի լավատես լինել, մտածել շրջապատի բարօրության մասին, եղածից բաժին հանել դիմացինին, այնպես անել, որ ճակատդ բարձր քայլես, որ մահանալուց հետո չասեն՝ ե՛ն շան տղան մահացավ, այլ՝ ավիստանք զգան:

ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



Կապանի Հավիձոր եւ Երկաթուղայինների թաղամասերը, որոնք կառուցվել են Վ.Աբրահամյանի ղեկավարությամբ



Հնորհավորումք եւ գնահատումք



ՍՈՒՐԱԶ ԱՍՐԳՅԱՆ

ՀՀ պաշտպանության նախարարի խորհրդակցական, գեներալ-լեյտենանտ

1992թ. ապրիլի վերջին Կապանի սահմաններում իրադրությունը կտրուկ արվեց, թշնամու արկից խոցվեց զրահանքեման, որի մեջ զոհվեց ինը ազատամարտիկ, քաղաքի հրետակոծությունից զոհվեցին խաղաղ բնակիչներ: Հրամայական պահանջ էր ծագել ապահովել բնակչության անվտանգությունը, ստեղծել ապաստարաններ, ինժեներական այլ կառույցներ, ապահովել անվտանգ երթևեկելու պայմաններ, քանզի հակառակորդը կրակի տակ էր պահում Կապան-Երեւան մայրուղու որոշ հատվածներ: Ստածեցի, որ այդ օրհասական ժամանակ իմ տեղը հայրենակիցներին կողքին է եւ մայրաքաղաքից տեղափոխվեցի պատերազմական իրավիճակում հայտնված իմ հայրենի շրջան:

Կապան հասնելուս պես խորհրդակցություն հրավիրեցի տեղական իշխանությունների ղեկավարների, հիմնարկ-ծեմարկությունների տնօրենների, այլ իրավասու անձանց մասնակցությամբ: Ինձ ասացին, որ Վոլոդյա Աբրահամյանին՝ Գեներալին, նույնպես հրավիրեմ խորհրդակցության: Պատասխանեցի, որ այդ Գեներալին չեմ ճանաչում: Բացատրեցին, որ ժողովուրդն է նրան այդպես անվանակոչել, ինքը «ժողովրդական» գեներալ է: Այսպես սկսվեց մեր ծանոթությունը: Հետագա շփումներից կռահեցի, թե ինչու եմ Գեներալ կոչում. նրա ասածն ասած էր, խոսքը՝ խոսք, եթե մի բան խոստացել է, ուրեմն անպայման պիտի կատարի: Գեներալներն իրավունք չունեն հենց այնպես մի բան խոստանալ, եթե չեն անելու: Վերադառնալով մշտա

խորհրդակցությանը, դրա ընթացքում անհետաձգելի խնդիր համարեցի Կապանից մինչեւ Սյունիք ընկած՝ օդանավակայանի մոտով ձգվող ճանապարհի եզրին հողապատնեշ պատրաստել: Մերձակա Աղբերդ գյուղից կրակի տակ էին առել ճանապարհը, որոշ գյուղեր մարդիկ հանքաթունելով էին հասնում: Եղան նաեւ առարկողներ, խոսք խնդրեց Վոլոդյա Աբրահամյանը՝ նույն ինքը՝ Գեներալը եւ ասաց, որ իր շինկազմակերպությունը բարձր տեխնիկա ունի, դիզելային վառելիք տրամադրել են, միայն բեռնատար մեքենաներ պիտի հատկացնել՝ հողազանգվածը տեղափոխելու համար:

Այդպես սկսեցինք միասին աշխատել: Պիտի ասեմ, պատերազմող Կապանի համար ինժեներական կառուցվածքներ ստեղծվեցին շնորհիվ Վոլոդյա Աբրահամյանի: Մանավանդ երբ Կապանում գունարտակ ստեղծվեց, բանակի համար բոլոր կարելու շինարարություններն իրականացնում էր նրա ղեկավարած շինարարական կազմակերպությունը՝ խրամատներ ու բլինդաժներ Օռած քարում, Փայլասարում, Դավիթբեկում: Ազատագրված տարածքներում շատ կարճ ժամանակամիջոցում կառուցեց զինվորական հոսպիտալ, հացի փուռ, վաքսատուն, կաթսայատուն, պաշտպանական նշանակության այլ օբյեկտներ: Կիսավեր, հրդեհված շինությունները վերակառուցում, հիմնամորոգում, դրանց երկրորդ կյանք էր պարգևատրում:

Վերջին կառույցի մասին եմ ուզում նշել. խոսքը Կարմրաքարի պրոֆիլակտորիումի մասին է, որը հիմնադրոգելուց-վերակառուցելուց հետո վեր ածվեց զորամասի: Որպես հանձնաժողովի նախագահ՝ նրա կառուցած օբյեկտները եւս եմ ընդունել: Պիտի ասեմ, որ խնդիրներ չէին ծագում: Պատահել է, որ ինչ-ինչ թերություններ են եղել, բայց դրանք իսկույն վերացվել են, եւ կառույցն ընդունվել է շահագործման: Ինչպես ռուսական ասացվածքն է ասում, բարեկամությունը՝ բարեկամություն, ծառայությունը՝ ծառայություն:

Մեր ընկերությունը շարունակվում է մինչեւ հիմա, այլ կերպ լինել պարզապես չէր կարող:

Վլադիմիր Աբրահամյանին, ութսունամյակի առթիվ, մաղթում եմ առողջություն, հաջողություն: Որպես մարդ եւ մասնագետ նա հարգված է եղել, կասկած չկա, որ այդպիսին էլ կմնա:



ՈՐԲԵՐՏ ԹԱՂԵՎՈՍՅԱՆ

ՀՀ «Գազդերմ» ՍՊ ընկերության տնօրեն, ՀԽՍՀ բնակարանային-կոմունալ տնտեսության մինիստրի նախկին տեղակալ

Եւ ու Վոլոդյա Աբրահամյանը դպրոցական մատարանից ենք իրար ճանաչում: Հայրս՝ Թաղեւոս Թաղեւոսյանը, մոտ 15 տարի զբաղվել է Քաջարանի պղնձամոլիբդենային ծննդավայրի երկրաբանահետախուզական աշխատանքներով, 1939-1945 թվականներին ղեկավարել Քաջարանի երկրաբանահետախուզական արշավախումբը, որ հաշվարկել է հանքավայրի պաշարները, 1949-ին երրորդ անգամ գործուղվել է Քաջարան՝ նորաստեղծ Գրոմոլյան երկրաբանահետախուզական արշավախմբի պետ եւ մինչեւ 1952 թվականն ուսումնասիրել Քաջարանի հանքավայրում ռադիոակտիվ տարրերի (ուրանի) առկայությունը: Այդ ժամանակ Քաջարանում ինտերնացիոնալ դպրոց կար, որտեղ դասավանդում էին իրականացվում էր երեք լեզվով՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն: Ես, մենք սովորում էինք հայկական բաժնում, ինքը մի դասարան ցածր էր, բայց դա չէր խանգարում մեր մտերմությանը: Ասեմ



ՄԻԷԱՅԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Ռազմական գործիչ, գեներալ-լեյտենանտ

Վոլոդյա Աբրահամյանի մասին ինչքան էլ ասենք, քիչ կլինի, բայց ճիշտը պիտի ասվի: Կապանցիներին շատ հարգելով-սիրելով, առավել տեղ եմ տալիս մարդկանց, որոնց լավ ճանաչել եմ Արցախյան պատերազմի տարիներին: Այդ ժամանակ ճանաչել եմ ոչ միայն զինվորներին, այլեւ մարդկանց, ովքեր միգրացիոն պատերազմից մի քիչ դուրս էին, բայց շատ կարելու գործ էին անում հենց բանակաշինության համար: Այդ մարդկանցից առաջինը Վոլոդյա Աբրահամյանն է: Ինչու: Ես Կապանում ամենից շատ հարգում եմ մի քանի մարդկանց, ովքեր իմ կողքին կանգնած են եղել: Իմ կողքին՝ մշտապես եւ բանակի կողքին: Շատերն էին այն ժամանակ փորձում, ինչով կարող էին՝ աստար լինել կռվող տղերքին: Բայց Վոլոդյան արել է այն անհրաժեշտը, ինչն առնչվում էր կոնկրետ մեր հայրենիքի պաշտպանությանը: Նա

լռելյայն իր միջոցներից, նաեւ իր ղեկավարած շինարարական կազմակերպության, ամեն ինչ անում էր եւ ոչ մի տեղ այդ մասին չէր ակնարկում: Որովհետեւ անում էր գիտակցումով, որ մեր երկրի պաշտպանության համար է անհրաժեշտ: Երբեք չեմ մոռանա՝ ինչ հարցով դիմում էինք, մի անգամ չի ասել՝ չեմ կարող, կառուցում էր բլինդաժներից սկսած մինչեւ զինվորների համար կացարանները: Կառուցում էր նաեւ այն բլինդաժները, որոնք հակառակորդի կրակի տակ էին: Ոչ մի անգամ չի ակնարկել՝ բա ինչպե՞ս կլինի, կրակում են: Երբ անհապաղ կառուցելու որել է խնդիր էր լինում, նրան էի դիմում, իսկույն պատասխանում էր. «Համարի, որ արված է», «Գործ չունես, ես կանեմ»: Նման մարդկանց մեր հայրենիքը, Կապանի ժողովուրդը պիտի գնահատի: Մարդիկ կան, որոնց մասին շատ տարիներ հետո նաեւ ասվելու եւ խոսվելու է: Նման դեպքում են ասում՝ մարդն ապրում է այնքան, որքան նրան հիշում են:

Վոլոդյա Աբրահամյանի հետ առօրյա կյանքում էլ եմ շփվել: Սեղանի շուրջ ենք նստել, մի կտոր հաց կիսել, նրա ոգևորիչ խոսքերն էլի մեզ համար էին, պատերազմական լարված օրերին, մեզ գոտայնդելու, հուսադրելու համար: Քանզի մենք նրա համեմատ երիտասարդ էինք: Օրինակ, մտածում էինք շատ զինվորական կացարաններ շահագործել, դիմում էինք նրան, պատասխանում էր՝ դուք գործ չունեք, ես ամեն ինչ կանեմ:

Սրտանց շնորհավորում եմ նրան՝ հոբելյանի առթիվ: Ի դեմ քեզ, ես Կապանի ժողովրդից շատ եմ շնորհակալ, մեծ եղբայր, հարազատ մարդ: Տա Աստված, որ 100-ամյակը միասին նշենք:



ՀԵՆՐԻԿ ԱՎՂԱՆՅԱՆ

Կապանի հակաօդային պաշտպանության գնդի նախկին հրամանատար, գնդապետ

Բնավորությամբ անկաշկանդ, համարձակ, եմքակաների հանդեպ չափազանց պահանջող, միաժամանակ շատ բարի ու կատակասեր մարդ է Վոլոդյա Աբրահամյանը: Երբ հայ-ադրբեջանական հակամարտությունը թեւակոխեց պատերազմական շրջան՝ Կապանի հակաօդային պաշտպանության գնդի ձեւավորման, զինվորականության համար կենցաղային պայմանների ստեղծման, մեկնարկային եւ կրակային դիրքերի ինժեներական կառուցվածքների պատրաստման գործում պատշաճ մակարդակով օգնություն ցուցաբերեց հատկապես «Քաջարան» տրեստի կառավարիչ Վոլոդյա Աբրահամյանը, ինչպես ժողովուրդն էր կնքել՝ «народный генерал»: Ունենալով աշխատանքային հսկայական փորձ, շինարարական, տեխնիկական մեծ պոտենցիալ եւ աշխատուժ, պատերազմական այդ ծանր օրերին անմնացորդ նվիրվածությամբ գործի լծվեց Վոլոդյա Աբրահամյանը՝ կառուցելով Կապանի տարածաշրջանի պաշտպանական գոտիները, տեղադրելով ինժեներական կառուցվածքներ, իրականացնելով նորաստեղծ բանակի համար այլեւայլ շինաշխատանքներ:

Կապանի հակաօդային գնդի մարտական տեխնիկայի կրակային ու մեկնարկային դիրքերն ընտրում էինք միասին եւ միասին էլ կարգավորում, նաեւ ինժեներական եւ տակտիկական առումով, ինչպես եւ անձնակազմի համար տնակներ տեղադրելով ու բավականին նպաստավոր կենցաղային պայմաններ ստեղծելով: Նրա հետ տեղազնուն էինք անցկացնում, տեսնել էր պետք, թե ինչպես երկու-երեք օրվա ընթացքում հսկայական բլուրը գլխատում, հարթում, դարձնում էր մի հրապարակ, որտեղ, ըստ մարտավարական պարամետրերի, տեղադրում էինք թե KPYT, թե OCA հակաօդային կայանքները: Այդ ռազմական սարքավորումները տեղադրվեցին եւ Ձորք թաղամասում, եւ Կաղնուտում, եւ Փայլասարում, Վերին Խոտանում: Դիրքերում անցկացնում էին եռաֆազ հոսանք, որը հնարավորություն էր ընձեռնում մարտական տեխնիկան աշխատանքել ոչ միայն դիզելային վառելիքով, այլեւ եռաֆազ հոսանքով՝ փոխարկիչի միջոցով: Էլեկտրական հոսանքի անցկացումը նպաստում էր անձնակազմի կենցաղային պայմանների բարելավմանը, ինչպես նաեւ ղեկավարման կետերի անխափան աշխատանքին՝ մշտական կապ պահպանելով գնդի հրամանատարության հետ:

Պատերազմական շրջանում անհրաժեշտ էր ժամանակակից գործնառ: Կառավարության որոշումով Կապանի շրջանի Շահումյան թաղամասում գտնվող օճիկլոգիական հիվանդանոցը տրամադրվեց թիվ 83117 գործնառին: Անհրաժեշտ էր հիվանդանոցի մասնաշենքերն ու օժանդակ կառույցները պլանավորել, վերափոխել եւ հարմարեցնել այնպես, որ ծառայեր որպես գործնառ: Հիվանդանոցի ձեւափոխման, կապիտալ վերանորոգման գործը հանձնարարվեց «Քաջարան» տրեստին, որի կառավարիչը Վոլոդյա Աբրահամյանն էր: Հմուտ ինժեներ-շինարար գնդի մարտական տեխնիկայի դիրքերի ինժեներական գործերն ավարտելուց հետո ձեռնամուխ եղավ հիվանդանոցի վերածեղծմանը՝ վերակառուցմանը, ինչը հաջողությամբ ավարտին հասցրեց: Եվ ահա իմանում եմ, որ կենսուրախ, եռանդով լեցուն ընկերաբուրում է կյանքի 80 տարին: Նրան երկար կյանք եւ առողջություն եմ մաղթում: Ցանկանում եմ, որ մասնակցի իր թոռների հարսանիքներին, տեսնի իր երազած բարգավաճ Հայաստանը:

Կարծիքները գրառեց եւ փպագրության պատրաստեց Վահրամ Օրբելյանը



ՎՈՒՐՈՒՄ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

Հայաստանի հանրապետության և մետալուրգիայի միության տնօրեն

Մենք այս աշխարհ ենք գալիս որպես զինվորներ, և ամենքս՝ մեզ ի վերուստ տրված «հանձնարարությամբ», որն այլ խոսքով կոչենք ճակատագիր: Կյանքն էլ ինքնենք կազմակերպում ենք այնպես, ինչպես զինվորը մարտադաշտում իր պարտքը կատարելիս: Հարթեցինք՝ փառք մեզ, բայց, ավաղ, պարտվել էլ կա, որին պետք է պատրաստ լինել:

Այս ամենը մեզ՝ սովորական մահկանացուներին համար է սաված: Սակայն կան մարդիկ, ովքեր աշխարհ են գալիս «հատուկ հանձնարարությամբ», ինչպես ասացինք՝ ճակատագրով: Յուրահատուկ մարդիկ են նրանք՝ չեն ենթարկվում «աշխարհիկ» օրենքներին և ամեն ինչ անում են՝ մինչև վերջ սրբորեն իրականացնելու իրենց առաքելությունն այս կյանքում: Նրանք դրա համար վարձա-հատույցի չեն սպասում, պարգևների ու շքանշանների ակնկալիք չունեն:

Այս տեսակ մարդ է Վուրույա Աբրահամյանը, մեկը նրանցից, ովքեր ունեն ընդգծված ազգային նկարագիր, բայց եւ հեռու չեն մեծ աշխարհի բանուգործից եւ կյանքի իրենց բանածեն ունեն՝ «Մարդու արժանիքները պետք է չափել ստեղծած ու թողած ժառանգությամբ»:

Այնքան շատ բան կա Վուրույա Աբրահամյանի ժառանգության մեջ, բայց ինքը դրանում, որպես ամենամեծ հարստություն, տեսնում է իր ընտանիքը:

Ապրելու մեկ այլ բանածեն էլ ունի Վուրույա Աբրահամյանը. «Ունենալով որբի դառը մանկություն, մտքումս երգվել էի, որ ճիշտ ապրելով պիտի հաղթահարեմ ներսումս կուտակված դառը հիշողությունները: Նպատակալաց էի ու աշխատասիրությամբ հասա իմ ուզածին: Պարտական եմ նաեւ ճակատագրին՝ միշտ գնահատված լինելու համար: Եթե վստահում եմ, նշանակում է գնահատում եւ հավատում եմ»:

Երբ հիմնադրվեց «Հանրապետության մետալուրգ» հանդեսը, բնականաբար նրա առաջին թեմաներն ու հերոսները Ջանգեզուրի պղնձամուլիբդենային կոմբինատն ու Քաջարան քաղաքն էին՝ իրենց աշխատակից-բնակիչներով: Վ.Աբրահամյանի կյանքն սկսվել ու մշտապես հազար թելերով կապված է եղել Քաջարանի ու կոմբինատի հետ: Երբ 1968-ի ուժգին երկրաշարժը ցնցեց հարազատ ծննդավայրը, եւ անհրաժեշտ էր անհապաղ վերականգնել շենքերը, բաց երկնքի տակ մնացած մարդկանց օբեկանով ապահովել, նրան վստահեցին ղեկավարել երկրաշարժի հետևանքները վերացնող կազմակերպության գրասենյակը: Այդ տարիներին «Քաջարանի» տրեստի կազմում ստեղծվեց մի նոր շինվարչություն, եւ Վ.Աբրահամյանը նշանակվեց այդ շինվարչության պետ: Քաջարան քաղաքի գրեթե 90 տոկոսը կառուցեց հենց այդ կազմակերպությունը:

Վուրույա Աբրահամյանի հետագա ողջ կյանքն էլ առկայում է արարունով ու հայրենաշեն հազար ու մի գործերով, որոնց մասին հիշում ու խոսում են թե Քաջարանում եւ թե Կապանում ու ողջ Սյունիքում: Էլ ի՞նչ է պետք մարդուն, եթե ոչ նրա արածին՝ ասել է թե գործի մասին հիշատակումը: Չէ՞ որ, ինչպես պոետն է բնորոշել, «Գործն է անմահ...»:

Ահա թե ինչու ի սրտե միանում են բոլոր շնորհավորանքներին ու բարեմաղթանքներին, որոնք այդ անխոնջ մարդն այս օրերին ստանում է իր 80-ամյակի առթիվ:

Քաջարան

Վերին ձորի երեւելի մարդիկ

Խոսք ընթերցողին

Հարգելի ընթերցող, սիրելի վերինձորեցիներ: Տարիներ շարունակ ցանկություն ունեի գրել մեր նախնիների մասին, բայց հաշվի առնելով, որ դա անչափ պատասխանատու եւ դժվարին գործ է, չէի համարձակվում նախաձեռնել: Միշտ էլ այն կարծիքն եմ եղել, որ անցյալ չունեցողն ապագա ունենալ չի կարող, որի համար էլ, վերջապես, երկար խորհելուց հետո եկա եզրակացության, որ պարտավոր եմ գրել: Գալիք սերունդները պիտի իմանան, թե ովքեր ենք մենք, որտեղից ենք գալիս եւ ուր ենք գնում: Քիչ խորանալով անցյալի մեջ, զգացի, որ մենք՝ վերինձորեցիներս, անվանի, բանիմաց, հայրենասեր եւ շատ արժանավոր մարդիկ ենք տվել հայրենիքին: Հենց դա էլ իմն ոգևորեց, որ զբաղվեմ ոչ միայն մեր գյուղի՝ Քաջարանի, այլ ամբողջ Վերին ձորի անցյալով: Քանի որ առ այսօր այդ երեւելի մարդկանց մասին ոչ ոք գրավոր ոչ մի աշխատություն չի թողել, իսկ ես մանկուց շատ էի լսել մերոնց քաջագործությունների մասին, որոշեցի հավաքել արխիվային փաստաթղթեր, պատմություններ, դրանք իմաստավորել ու հանձնել թղթին:


Վերին ձորն ունի հաստատուն ավանդույթներ, ընդհանուր պատվիրաններ, օրհնություններ, մարդկանց վարքագծի բարոյական նորմեր, հարուստ կենսափորձ: Կենսասիրությամբ լի են մերոնք՝ սիրառատ, խոսքաշեն, ամեն բանի արժեքը գիտակցող, իմաստախոսություններով համեմված խոսք ու զրույցով: Նրանք քաղցր հիշողությունները պահպանում են, մարդավարի ապրելու արժանապատվություն են պատգամում: Փնթիթեցում ու լավկամությունը հատուկ չեն իմ համերկրացիներին: Նրանք ունեն ջերմ եւ մեծ սիրտ, հայրենասեր են, առատածեռն, համեստ ու բարի, իրենց նվաճումներն ու ձեռքբերումները կիսում են բոլորի հետ:

Մայրախնամ են իմ հայրենակիցները եւ կանանց արժանիքները գնահատող: Վերին ձորի կանայք շատ պարկեշտ են, նրանք հայելու մեջ իրենց աչքերի խորքն են տեսնում, գիտակցությունը սեւեռում ինքնաճանաչման վրա: Նրանք քուն ու դադար չունեն, վեհանձն են, նվիրված են իրենց ամուսիններին: Ոչ միայն սիրել, այլ իրենց սիրել տալու արվեստով կախարդել գիտեն իրենց ամուսիններին: Վերինձորեցիները երբեք չեն սիրել անբարտապան, ստահակ, մեծախոս, աշխատանքից խուսափող, հարբեցող, կեղծավոր, ցուցամուլ, պատվամոլ, սնափառ, ժխտ, ազատ, թուլամորթ, դատարկախոս, ծուլ եւ նախանձոտ մարդկանց:

Կապուտջուղ լեռան հովտում, Ողջի գետի ձախ ափին գտնվող փոքրիկ Քաջարան գյուղը ժամանակին շրջապատված է եղել թուրքական Փիրդուղան, Շաբաղին, Ատկըզ, Արալըզ եւ Օխիզի գյուղերով: Բացի այդ, Նախիջեանցից դեպի Ղարաբաղ տանող ճանապարհն անցնում էր Կապուտջուղի լեռնանցքով եւ Քաջարան գյուղով: Ժամանակի ընթացքում այդ գյուղերի եւ Քաջարանի միջեւ բախումներ են եղել: Քանի որ թուրքերն արդեն տիրացել էին Գեղվա ձորին, ցանկանում էին տիրանալ Ողջի գետի ամբողջ հովտին՝ ոչնչացնելու համար Քաջարան, Վերին Հանդ, Լեռնաձոր, Փուխրուտ, Փիրմազրա գյուղերը եւ վերահսկելու այդ շատ կարեւոր քարավանային ճանապարհը: 1905թ. այդ հակասությունները հասնում են իրենց գագաթնակետին. Նախիջեանցից եկած էմիսարները թուրքական Օխիզի գյուղում գաղտնի ժողով են գումարում եւ որոշում առաջին հերթին վերացնել Քաջարան գյուղը: Քանի որ Քաջարան եւ Շաբաղին գյուղերն իրար կապած էին եւ գյուղացիներն իրար լավ էին ճանաչում, որոշում են, որ յուրաքանչյուր շաբաղինցի պետք է գիշերով մտնեք Քաջարան, ծեծեք իր ծանոթի դուռը եւ սպանեք նրան: Շաբաղինցի Շահրով Շխամադը պլանավորված

ոճրագործությունից երկու օր առաջ գալիս է քիրվայի՝ Նավասարդի տուն եւ այդ գաղտնիքը հայտնելով նրան՝ խնդրում է բացակայել գյուղից:

Գյուղի հեռատես մարդիկ միշտ էլ կասկածել են թուրքերին եւ գիտակցելով գալիք վտանգը՝ պատրաստվել էին գյուղի պաշտպանությանը: Բաքվում բնակվող մեծահարուստ քաջարանցիները թեւատրոս Մանգասարյանի գլխավորությամբ ժամանակին գյուղի եկեղեցու շուրջը պարիսպ էին կառուցել՝ ներառելով քահանայի երկհարկանի տունը, որի առաջին հարկուն աղբյուր էր բխում: Եկեղեցու զվսին քարե դիրքեր էին կառուցել: Երբ թուրքերը հարձակվում են, թեւատրոսը գյուղի կանանց եւ ծերերին պատսպարում է եկեղեցուն, իսկ երիտասարդները դիրքերն են զբաղեցնում: Երբ օր ու գիշեր կռվելուց հետո քաջարանցիներին հաջողվում է ջարդել թուրքերին եւ քշել՝ ոչնչացնելով շատերին՝ ավերել նրանց գյուղերը: Իհարկե, քաջարանցիներին օգնության են հասնում կալերեցի խմբապետ Ենոքն իր մարտիկներով, Լեռնաձորի եւ Հանդի բնակիչները: Աշուղ Դավիթը, ով եղել է ակնատեսն այդ կռիվների, երգ է ձուլել թեւատրոսին եւ այդ հերոսամարտի մասնակիցներին:



Այդ երգի բնագիրը որոշ ժամանակ պահպանվել էր նրա որդի Հարունի արխիվում, հետագայում պահպանվել է Կապանի գործկոմի նախկին նախագահ Հարություն Մանգասարյանի անձնական արխիվում, ում մահվանից հետո նրա դուստրն ինձ է հանձնել բազմաթիվ այլ փաստաթղթերի հետ միասին: Պատմության ընթացքում շատ է պատահում, որ հայրենիքին մեծ ծառայություններ մատուցած մարդիկ չեն գնահատվում, մոռացվում են: Այդպիսի մարդկանցից է նաեւ թեւատրոս Մանգասարյանը: Որպեսզի ու կարողանամ պատշաճ կերպով ձեռնարկել վերին ձորի երեւելի մարդկանց ծառայությունները մեր հայրենիքին, հարկադրված եմ մի քանի խոսքով անդրադառնալ նաեւ Շավ գյուղի վերաստեղծման պատմությանը: Պատմական տվյալների համաձայն՝ այժմյան Շավ գետի (նախկինում Բատուտա էր կոչվում) հովտում գտնվող բազմաթիվ գյուղեր մինչեւ 18-րդ դարը պատկանում էին Չավնդուրի իշխան թոռնին, ով 1725թ. սպանվել է Եղվարդի ճակատամարտում: Գետի հովիտն այդպես էլ կոչվում էր՝ Չավնդուրի գավառ: Հետագայում թշնամին նվաճել եւ ավերել է այդ գյուղերը, այդ թվում նաեւ Շավն իր Սուրբ Գեորգ եւ Թարջունամանց (Թարգմանչաց) եկեղեցիներով: 1890-ական թվականներին Կապանի շրջանի Քաջարան, Վերին Հանդ, Քրդիկանց եւ Փիրմազրա գյուղերից հողագուրկ գյուղացիների մի մասը փորձում է բնակություն հաստատել այդ վայ-

րերում, բայց թուրք Նարինան բեկն այդ տարածքներն իրենը համարելով՝ հայերին արգելում է մտնել այդ գյուղերը: Սակայն գյուղացիները համառորեն դիմադրում են եւ ցանկանում անպայման մնալ այդտեղ: Մինչեւ խորհրդային կարգերի հաստատումը որոշ անվանի քաջարանցիներ Բաքվի նավթահանքերի սեփականատերեր էին հանդիսանում: Նրանց մեջ առանձնապես հայտնի էին թեւատրոս Մանգասարյանը, Դավիթ (Արտեմիչ) եւ Եփրեմ (Իվանիչ) Հարությունյանները: Չլինեին այդ անվանի մարդիկ, թուրքերը երբեք չէին թողնի հայերին վերաբնակվել Շավում (թեւատրոսը Բաքվից հատուկ նկարիչ է բերում Շավ, նկարում նախկին հայկական կիսաքանդ եկեղեցիները եւ գյուղերը, որպես ապացույց, որ նախկինում այդ վայրերում հայեր են ապրել): Այդ երեք հայտնի քաջարանցիները դիմել են Նիկոլայ 2-րդ ցարին եւ ապացուցել, որ Շավը նախկինում հայաբնակ գյուղ է եղել, բայց ավերվել է Դավիթբեկյան պատերազմների ժամանակ 1722-1727թթ.: Նիկոլայ 2-րդից հատուկ հրովարտակ են ստանում Շավը հայերին հատկացնելու վերաբերյալ եւ ներկայացնում են նահանգապետին: Սա տեղի է ունեցել 1896-ին: Եթե ժամանակին մեր նախ-


նիները Վերին ձորը եւ Շավի ենթաշրջանը չնաքերին թուրքերից, ապա 1918-1921-ին Նժդեհի համար անհնար կլինեց պաշտպանել եւ պահպանել Լեռնահայաստանը հետագա սերունդների համար: Ահա թե ինչպիսի մեծ ծառայություն է մատուցել ազգին մեր ակնավոր հայրենակից թեւատրոս Մանգասարյանը, ում անունն այսօր նույնիսկ չի հիշատակվում:

Այս գրքում նշված ուժեղ, գործարար անհատականությունները միշտ պատիվ են բերել իրենց ծննդավայրին, որովհետեւ միշտ կրել են ճշմարտության քաղի, որն էլ հաճախ այրում էր հենց իրենց ձեռքերը: Շատ մարդկանց, ովքեր տարբեր պաշտոններ են զբաղեցրել ժամանակին, կարելի էր ընդգրկել այս գրքում: Սակայն առաջին հերթին հաշվի եմ առել անձը: Հին ռուսական առածն ասում է. նախքան պորձեսոր լինելը նախ եւ առաջ հարկավոր է մարդ լինել:

Հայաստան աշխարհի չքնաղ Վերին ձորի Քաջարան, Ողջի, Հանդ, Լեռնաձոր, Փիրմազրա եւ Փուխրուտ գյուղերից ենք գալիս մենք, վեհափառ Կապուտջուղ լեռան ստորոտից ենք գալիս մենք, դարերի ընթացքում մեծ արիավիրք տեսած, բայց միշտ հաղթած, ճգնած, տուն ու տեղ կառուցած եւ արյան գնով պահպանած, քարից հաց քամած հայրենասեր, անմահացած քաջերով, բարի, աշխատասեր, Քաջարանից ենք գալիս մենք:

ՎՈՒՐՈՒՄ ԱՐԲՈՒՄՅԱՆ Ե.ԵՐԵՒԱՆ, «Հայագիտակ», 2014թ.

Ծննդավայր Քաջարան գյուղը



ՌՈՒԲԵՐՏ
ԷԶԱՆԱՆՅԻ

Այս հինավուրց գյուղը գտնվում է Սյունիքի (Ջանգեզուրի) լեռնաշղթայի Աժդանական-Կապուտջուղ (3904մ) եւ Քաջարանց (3403մ) լեռնագագաթների արեւելակողմում, երկու գետակների միախառնման ձախակողմում: Աշխարհագրական կոորդինատներն են՝ արեւելյան երկայնության 46 աստ. 9 րոպ. 36 վրկ. եւ հյուսիսային լայնության 39 աստ. 9 րոպ. 4 վրկ.:

Տաթևի վանքի տասներորդարյան հարկացուցակի՝ Չորր Գավառում առբերված Կաճաճուտ գյուղն է (միջին մեծությամբ գյուղ էր, հարկաչափը՝ 8): Բարբառային հնչմամբ գյուղանվանը զուգահեռել է Քջանանց տարբերակը: Դավիթբեկյանները 18-րդ դարում գործածել են Քաջարանց անվանումը:

Տեղանքն ունի սակավ ուսումնասիրված հնավայրեր. ավանդազրույցների մեջ գերիշխում է հեթանոսական-մշակութայինը: Նապատ հնավայրն աղերս ունի խուռիական ջրի աստուծու անվանը, Ալքաճորը (ալք՝ առասպելական ոգի), Չիթաճոր-Յուղաճորը (երբեւէ նավթ է երևակվել), երկաթաջրի թթուջուր հանգստավայրը, Քառասունակ մեղմաթեթ լանջերի մարգագետինները հայտնի են ինքնատիպ ավանդապատումներով:

Միջնադարում կառուցված Սբ Դակովբ եկեղեցին վերանորոգվել է 1912 եւ 2014 թվականներին: 1775թ. մի ժողովածու է գրչագրել Գրիգոր Քաջանեցի գրիչը (Մատենադարան, հմ. 811), որի մեջ՝ Գրիգոր Տաթևացու Սաղմոսաց մեկնությունը:

«Քաջարան» վեպ ունի մեծ Սերուն: Դայրենապատումի մեջ անդրադարձել է



Կապուտան լիճը

Նոյյան ժամանակների զրույցներին. «Կապուտջուղ լեռան վրա սառույցներ կան եւ Կռվակոչի առասպելական ժայռը»: Նաեւ՝ «Ողջու կիրճով ոչ Պոմպեոսի բանակն է կարողացել անցնել, ոչ էլ՝ Շապուհ արքայինը, ...մնացել են ներքեւում՝ Բաղաբերդի տակ»:

Դանբաշխարհի նորագույն ուստան Քաջարան քաղաքն իր անունն առել է պատմական Քաջարանց գյուղից: Վերջինս շարունակում է մնալ առանձին համայնք, թեպետ մերձակա Ողջի-Ողջանց, Շիվդինանց, Աթոյք, Արջադուռ, Սուրբ Դավիթ, Բանիս-Դանդ գյուղերը լուծարվել կամ մե-

րառվել են քաղաքային համայնքի մեջ:

Գյուղը հարեւանում է «Ջանգեզուրի ՊՍԿ» ՓԲԸ բաց հանքին եւ գտնվում է ավելի քան 2000մ բարձրության վրա: Ամհիշելի ժամանակներից գյուղով է անցել Աղի ճանապարհը. հին սյունեցիները գրաստներով Նախիջեւանից աղ են ներկրել Աժդանականի լեռնանցքով: Ավանդազրույցներ են պահպանվել Դավիթ Բեկի, Տփղեհի, Անդրանիկի մասին, որոնք հյուրընկալվել են Քաջարանցում եւ զորակոչ անցկացրել:

1881 թվականին Քաջարանց է այցելել Բաֆֆին:

Սյունյաց Երկիր

ՀԻՄՆԱԴՐՈՒ ԵՎ ՀՐԱՏԱՐԱՎԿԻՉ
«ԱՅՈՒՆՅԱՑ ԱԵՆԱՐՅ»
ՍԱԿՄԱՆԱԲԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
Գլխավոր խմբագիր՝
ՍԱՄԵԼ ԱՆԷՔՍԱՆՅԱՆ

Հասցե՝ Զեռ.
Կապան, Շահումյան 20/32:
(0285) 5 25 63,
(091) 45 90 47,
(077) 45 90 47:
syuniacyerkir@mail.ru
www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում
եւ հեղինակներին չեն վերադարձ-
վում: Խմբագրության եւ հեղինակների
կարծիքները կարող են չհամընկնել:
Նյութերը ներկայացնել մեքենագիր
վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

«ԳՐՎԱԶԴ - ԾԱՆՈՒՑՈՒՄ»
բաժնուն տպագրվող նյութերի համար
խմբագրությունը պատասխանատվություն
չի կրում:
Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է:
® նշանի տակ տպագրվում են
գովազդային նյութեր:
Գրանցման վկայականը՝ 01U 000231:

Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ»
հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Պետական աջակցություն՝ տարեկան
500 000 ՀՀ դրամ:
Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1700, գինը՝ 100 դրամ:
Ստորագրված է տպագրության
15.06.2015թ.: